ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» փետրվարի 2015 թվական N 11-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲԱԺՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԹՎՈՎ ՄԵԿ ՄԱՐԴԱՏԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՆՈՒՄԸ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻՑ, ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ՝ ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՁԵՎՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ելնելով Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի կազմակերպչական և վերահսկողական բնույթի աշխատանքների արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունից, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթներով՝ **համայնքի ավագանին որոշում է**.

1. Թույլատրել իրականացնելու տրանսպորտային միջոցի՝ թվով մեկ մարդատար ավտոմեքենայի գնումը բանակցային ընթացակարգի կիրառմամբ՝ առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու:
2. Թույլատրել գնումն իրականացնել երկրորդային շուկայից:
3. Այդ նպատակով հատկացնել 3.500.000 (երեք միլիոն հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
4. Հանձնարարել քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 3-րդ կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 1/1/1 գործառական դասակարգման (5121) «Տրանսպորտային սարքավորումներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ (16)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան _____

Գ. Ադամյան _____

Ա. Բաղեյան _____

Ա. Բաղրամյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Գ.Թաթարյան _____

Հ. Խաչատրյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Վ. Հունանյան _____

Ռ.Մխիթարյան _____

Է. Մկրտչյան _____

Վ.Շիրինյան _____

Ե. Պողոսյան _____

Մ. Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«06» փետրվարի 2015 թ.